Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի
երկրորդ գումարման հոգաբարձուների խորհրդի՝
2021 թ. հունվարի 29-ին տեղի ունեցած թիվ 3 նիստի

ք. Երևան 29.01.2021 թ.

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ ՀՀ վարչապետի կողմից 2020 թ. օգոստոսի 7-ի № 910-Ա որոշմամբ հաստատված հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 29-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Լիազոր մարմնի կողմից ներկայացված գրությամբ առաջարկված իրավակարգավորման համաձայն՝ նիստը նախագահում էր Խորհրդի՝ տարիքով ավագ անդամը՝ ԵՊՀ դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի պրոֆեսոր Ա. Չուբարյանը, քարտուղարում՝ Խորհրդի քարտուղար, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ Մ. Մալխասյանը:

Ա. Չուբարյանի առաջարկով՝ նիստն սկսվեց 2020 թ. Արցախյան պատերազմի զոհերի հիշատակին նվիրված մեկ րոպե լռությամբ:

Այնուհետև Խորհրդի անդամ, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանող Խ. Աբաջյանը հարց բարձրացրեց, թե ինչու առաջարկվող օրակարգում ներառված չէ ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի տարեկան հաշվետվությունը: Հարցին պատասխանեց ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանը՝ նշելով, որ նիստը նախաձեռնվել է իր կողմից, և ներառվել են առավել հրատապ լուծում պահանջող հարցերը: Միաժամանակ նա նշեց, որ պատրաստ է հանդես գալ տարեկան հաշվետվությամբ, եթե Խորհուրդը նման օրակարգով նիստ հրավիրի առաջիկայում: Խորհրդի քարտուղար Մ. Մալխասյանը հավելեց, որ, քանի որ Խորհրդի նախկին նախագահ Գ. Մուրադյանն իր պարտականությունները դադարեցնելու մասին դիմում է գրել 2020 թ. նոյեմբերին, Գ. Գևորգյանը 2020 թ. դեկտեմբերի 25-ին գրավոր դիմել է իրեն՝ կազմակերպելու Խորհրդի նիստ, որպեսզի հաստատվեն 2021

ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը և հաստիքացուցակը, քննարկվեն հրատապ լուծում պահանջող նաև այլ հարցեր: Նույն բովանդակությամբ գրությամբ նա դիմել է լիազոր մարմնին՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, որի առաջարկած իրավակարգավորմամբ էլ՝ առաջին նիստի իրավական համանմանության սկզբունքով, Խորհրդի տարիքով ամենամեծ անդամը հրավիրել է նիստը:

Այնուհետև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանը հարցրեց, թե ինչու է օրակարգում ներառված առաջին հարցը: Ի պատասխան՝ Մ. Մալխասյանը նշեց, որ այս իրավիճակում բուհը հայտնվում է արդեն երրորդ անգամ՝ 2018 թ. մայիսից մինչև 2019 թ. հունվար և 2020 թ. ապրիլից մինչև 2021 թ. հունվար, երբ Խորհրդի նախագահի բացակայության պայմաններում անհրաժեշտ է նիստ հրավիրել, սակայն դա անհնար է, քանի որ նիստը հրավիրելու իրավունքը վերապահված է միայն Խորհրդի նախագահին, հետևաբար առաջարկվող իրավակարգավորումը նման փակուղուց դուրս գալու համար է:

Խորհրդի անդամ, ԵՊՀ ուսանողական խորհրդի նախագահ Դ. Ափոյանը հետաքրքրվեց, թե որն է Գ. Մուրադյանի հրաժարականի պատճառը: Ա. Չուբարյանը պատասխանեց, որ, իր կարծիքով, պատճառը 2020 թ. նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը կնքված կապիտուլյացիոն հայտարարությունն էր, սակայն հրաժարվեց վերջնական մեկնաբանությունից:

Ա. Չուբարյանն առաջարկեց քվեարկության դնել նիստի՝ նախապես ծանուցված օրակարգը.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգում լրամշակումների կատարում:

   Զեկուցող՝ *ԵՊՀ ՀԽ նիստը նախագահող Ա. Չուբարյան*

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն:

   Զեկուցող՝ *ԵՊՀ ՀԽ նիստը նախագահող Ա. Չուբարյան*

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2021 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:

   Զեկուցող՝ *ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյան*

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժին», ««Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագրություն» և ««Գիտական տեղեկագիր» հանդեսի խմբագրություն» կառուցվածքային ստորաբաժանումների միացում «Գիտական քաղաքականության վարչություն» կառուցվածքային ստորաբաժանմանը:

   Զեկուցող՝ *ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյան*

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2021 թ. հաստիքացուցակի հաստատում:

   Զեկուցող՝ *ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյան*

6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար աշխատակիցների առողջության ապահովագրման ծառայությունների մատուցման գնման պայմանագրի հաստատում:

   Զեկուցող՝ *ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյան*

7. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար անվտանգության ապահովման ծառայության մատուցման պետական գնման պայմանագրի հաստատում:

   Զեկուցող՝ *ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյան*

8. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար սանիտարական մաքրության ծառայության մատուցման գնման պայմանագրի հաստատում:

   Զեկուցող՝ *ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյան*

9. Ընթացիկ հարցեր:

Օրակարգը դրվեց քվեարկության և հաստատվեց. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգում լրամշակումների կատարում: Նիստը նախագահող Ա. Չուբարյանն առաջարկեց, որ հարցը ներկայացնի Մ. Մալխասյանը: Վերջինս նշեց, որ որոշման նախագծով առաջարկվող փոփոխությունները նրա համար են, որ Խորհրդի նախագահի լիազորությունները դադարելու պայմաններում հնարավոր լինի նիստ հրավիրել և ապահովել Խորհրդի բնականոն աշխատանքը: Նա նաև հավելեց, որ Գ. Մուրադյանի ընտրության վերաբերյալ նախորդ երկու որոշումները ստորագրել են Խորհրդի անդամներ Ռ. Հարությունյանը և Ա. Չուբարյանը, որոնք երկուսն էլ պրոֆեսորադասախոսական կազմից են ընտրված և ԵՊՀ հաստիքային աշխատողներ են: Առաջարկվող խմբագրումը վերացնում է նաև ԵՊՀ կանոնադրության և Խորհրդի աշխատակարգի միջև հակասությունները:

Խորհրդի անդամ, «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի տնօրեն Գ. Հարությունյանն արձագանքեց, որ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքը թույլ է տալիս նաև Խորհրդի համանախագահներ ունենալ, իսկ անդամների մեկ երրորդը նաև կարող է նախաձեռնել նիստ: Ի պատասխան՝ Մ. Մալխասյանը նշեց, որ առաջինը նախատեսված չէ ԵՊՀ կանոնադրությամբ, իսկ երկրորդի դեպքում՝ այդ նախաձեռնությունը ևս ի կատար է ածվում միայն Խորհրդի նախագահի կողմից:

Խորհրդի անդամ, ԵՊՀ անձի հոգեբանության ամբիոնի վարիչ Ն. Խաչատրյանը հարցրեց՝ արդյոք հակասություն չի առաջանա այն հարցում, որ Խորհրդի քարտուղարը և՛ նախագահի, և՛ քարտուղարի նիստը: Մ. Մալխասյանը պատասխանեց, որ այդ դեպքում նիստը քարտուղարելու է Խորհրդի՝ տարիքով կրտսեր անդամը, իսկ Խորհրդի նախագահի ընտրությունը պարզ է, որ պետք է լինի հաջորդ նիստի օրակարգում:

Խ. Աբաջյանը խնդրեց պարզաբանել լիազորությունների ստանձնման իրավական հաջորդականությունը, և Մ. Մալխասյանը պատասխանեց, որ առաջարկվող լրամշակումը հստակություն է մտցնում այս հարցում:

Այնուհետև Գ. Գևորգյանը հարցրեց, որ եթե Խորհրդի նախագահը գտնվում է գործուղման մեջ, այդ դեպքում ևս քարտուղարը ստանձնո՞ւմ է նրա լիազորությունները: Մ.

Մալխասյանը պատասխանեց, որ այդ հարցը կարգավորված է ԵՊՀ կանոնադրության 46-րդ կետով՝ Խորհրդի նախագահը հրավիրում է նիստը, իսկ Խորհուրդն իր կազմից ընտրում է նիստը նախագահող: Գ. Գևորգյանը մեկ այլ հարց բարձրացրեց, որ այդ կետով սահմանափակվում է Խորհրդի սովորող անդամի՝ նիստը նախագահելու հնարավորությունը, բայց չի սահմանափակվում նախագահ ընտրվելը: Մ. Մալխասյանը պատասխանեց, որ դա արդեն իսկ սահմանափակված է ԵՊՀ կանոնադրությամբ: Խորհրդի անդամ, ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ Կ. Խաչատրյանը, արձագանքելով ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի դիտարկումներին, առաջարկեց որոշման նախագծում ներկայացված կետը շարադրել այնպես, որ ԵՊՀ կանոնադրության հետ կրկնության խնդիր չլինի: Ա. Չուբարյանն առաջարկեց ավելի պարզեցնել ձևակերպումները, իսկ Ժ. Անդրեասյանը առաջարկեց ԵՊՀ կանոնադրության 46-րդ կետի հետ հակասություն չունենալու համար կարգավորումը կատարել կանոնադրության մակարդակով: Մ. Մալխասյանը պատասխանեց, որ կարելի է նախագծում ձևակերպումը հստակեցնել Խորհրդի նախագահի լիազորությունների դադարեցման, այլ ոչ թե բացակայության իրավիճակների համար, իսկ 34-րդ կետն արդեն իսկ թույլ է տալիս խնդիրը կարգավորել աշխատակարգի մակարդակով:

Ա. Չուբարյանն առաջարկեց նախագիծը դնել քվեարկության. կողմ՝ 16, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 10: Խորհրդի անդամներից 2-ը չմասնակցեցին քվեարկությանը:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 1-ին ենթակետով, ինչպես նաև 34-րդ և 46-րդ կետերով, առաջնորդվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անխափան աշխատանքն ապահովելու անհրաժեշտությամբ՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգում ավելացնել 3.13 կետը՝ հետևյալ ձևակերպմամբ. «3.13. Խորհրդի նախագահի լիազորությունների դադարման դեպքում խորհրդի քարտուղարը (եթե տվյալ բուհում սովորող չէ) ժամանակավորապես ստանձնում է նախագահի լիազորությունները՝ մինչև խորհրդի կողմից նախագահի ընտրության մասին որոշման կայացումը: Նախագահի և քարտուղարի լիազորությունների դադարման պայմաններում խորհրդի նախա-

գահի լիազորություններն իրականացնում է տարիքով ավագ անդամը, իսկ քարտուղարի լիազորությունները՝ կրտսեր անդամը»:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2.13. Խորհուրդը ձևավորվելուց հետո իր կազմից ընտրում է նախագահ (բացի ուսանողության ներկայացուցիչներից) և քարտուղար»:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն: Ա. Չուբարյանն առաջադրեց Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական դպրոցի տնօրեն Հ. Նավասարդյանի թեկնածությունը՝ հաշվի առնելով նրա զգալի վաստակը դպրոցի զարգացման գործում: ԵՊՀ իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանն էլ առաջադրեց ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ Կ. Խաչատրյանի թեկնածությունը: Խորհրդի անդամ, ԵՊՀ հեռահաղորդակցության և ազդանշանների մշակման ամբիոնի պրոֆեսոր Ա. Հախումյանը հարցրեց՝ հաստիքային աշխատողը կարող է արդյոք Խորհրդի նախագահ ընտրվել, թե ոչ: Գ. Հարությունյանն արձագանքեց, որ Խորհրդի ցանկացած անդամ կարող է առաջադրվել նախագահի պաշտոնում: Նույնը նշեց նաև Խ. Աբաջյանը՝ հավելելով, որ ԵՊՀ կանոնադրության մեջ կա սահմանափակում միայն սովորող անդամների համար:

Խորհրդի նախագահի թեկնածուներից նախ ելույթ ունեցավ Հ. Նավասարդյանը: Նա Խորհրդի անդամներին ներկայացրեց իր կենսագրությունը և գործունեության առանցքային դրվագները, Խորհրդի նախագահի պաշտոնում ակտիվորեն աշխատելու պատրաստակամություն հայտնեց:

Դ. Ափոյանը հարցրեց, թե ինչպես է Հ. Նավասարդյանը գնահատում ԵՊՀ ֆիզիկայի, ինչպես նաև մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետների կրթության կազմակերպման որակը: Հ. Նավասարդյանը պատասխանեց, որ ոլորտի տեսաբան գիտաշխատողները սոցիալական հարցերի առաջ են կանգնում, հետևաբար հեռանում են ծրագրավորման ոլորտ, մինչդեռ անհրաժեշտ է ինժեներության հետ կապ ստեղծել: Նա հավելեց,

որ իր դպրոցը համագործակցում է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի հետ և ունի ռոբոտաշինության լաբորատորիաներ, իսկ շրջանավարտները դիմում են հիմնականում հենց ԵՊՀ ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետներ: Դ. Ափոյանը հետաքրքրվեց դպրոցի շրջանավարտների՝ բուհում ստացած կրթությունից բավարարվածության մասին տվյալներով, իսկ Հ. Նավասարդյանը նշեց, որ շրջանավարտների հիմնական մասի պարագայում դրական արդյունքներ ունեն:

Խորհրդի անդամ, ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ուսանող Հ. Վարդումյանը հետաքրքրվեց, թե որն է Հ. Նավասարդյանի՝ ԵՊՀ զարգացման տեսլականը: Վերջինս նշեց, որ ԵՊՀ շատ ոլորտների գործունեությանը ծանոթ է և տեսնում է զարգացման որոշակի ուղղություններ:

Խորհրդի անդամ, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ասպիրանտ Ա. Սողոմոնյանը նկատեց, որ Հ. Նավասարդյանը գերզբաղված է դպրոցի գործերով, հետևաբար մտավախություն հայտնեց, որ թեկնածուն ժամանակ չի գտնի՝ լիարժեքորեն զբաղվելու Խորհրդի գործերով: Հ. Նավասարդյանը պատասխանեց, որ դպրոցի տնօրենի պաշտոնում մնալու է մինչև 2021 թ. դեկտեմբեր, հետևաբար հետագայում ժամանակի խնդիր չի ունենա:

Խ. Աբաջյանը հարցրեց, թե ինչպես է թեկնածուն պատկերացնում Խորհրդի գործունեությունը բուհի համար դժվարին ժամանակահատվածում: Հ. Նավասարդյանը պատասխանեց, որ Խորհուրդը կգործի իր իրավասությունների շրջանակում, և նիստերը կհրավիրվեն ըստ անհրաժեշտության՝ ի շահ համալսարանի: Նա հավելեց, որ ճիշտ չէ՝ Խորհրդի նախագահը բուհի աշխատակից լինի, քանի որ, իր կարծիքով, ռեկտորի հետ աշխատանքային պայմանագիր ստորագրելիս շահերի բախում է առաջանում գործատուի և աշխատակցի միջև: Խ. Աբաջյանն արձագանեց, որ Խորհրդի նախագահը պայմանագիրն ստորագրում է Խորհրդի անունից՝ Խորհրդի որոշմամբ, հետևաբար նրա կարգավիճակը կարևոր չէ: Խորհրդի անդամ, ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ասպիրանտ Բ. Հովհաննիսյանն էլ արձագանքեց, որ նույն տրամաբանությամբ Խորհրդում ռեկտորը հաշվետու պետք է չլիներ ուսանող և դասախոս անդամների առաջ: Ա. Հա-

խումյանը ևս արձագանքեց, որ քննարկվող հարցերը կարգավորված են օրենսդրությամբ:

Դ. Ափոյանը հետաքրքրվեց, թե ինչպես է պատկերացնում Հ. Նավասարդյանը բուհի զարգացումը, և ինչպես է ծրագրում իր գործունեության համատեղումը բուհի Խորհրդի նախագահի և դպրոցի տնօրենի պաշտոններում: Նա նաև մտահոգվեց, որ դպրոցի տնօրենի լիազորությունների դադարումից հետո կարող է դադարել նրա անդամությունը Խորհրդում: Հ. Նավասարդյանը պատասխանեց, որ չի կիսում մտահոգությունը և պատրաստ է լծվելու աշխատանքի:

Այնուհետև Ժ. Անդրեասյանը գովեստի խոսքեր հնչեցրեց Հ. Նավասարդյանի հասցեին՝ շեշտելով նրա կազմակերպչական հմտությունները:

Վ. Ոսկանյանը հետաքրքրվեց Հ. Նավասարդյանի՝ հումանիտար մասնագիտությունների զարգացման տեսլականով: Հ. Նավասարդյանը նշեց, որ պատրաստի հստակ ռազմավարություն առայժմ չունի և դրա պատրաստումը տեսնում է Խորհրդի համատեղ աշխատանքով:

Մ. Մալխասյանը հարցրեց, թե ինչպես է հավակնորդը պատկերացնում Խորհրդի ընթացիկ աշխատանքների կազմակերպումը: Հ. Նավասարդյանը պատասխանեց, որ պատրաստ է համատեղ աշխատել:

Այնուհետև Ն. Խաչատրյանը դրվատանքի խոսքեր հնչեցրեց Հ. Նավասարդյանի մասին:

Մ. Մալխասյանը հետաքրքրվեց՝ արդյոք շահերի բախում կարող է լինել, որով իրավականորեն սահմանափակվի բուհի Խորհրդի նախագահի և դպրոցի տնօրենի պաշտոնների համատեղումը: Հավակնորդը պատասխանեց, որ, իր կարծիքով, իրավական սահմանափակում չկա:

Ապա խոսքը տրվեց հաջորդ հավակնորդին՝ Կ. Խաչատրյանին, ով ներկայացրեց իր կենսագրությունը, ԵՊՀ զարգացման ուղղությունների մասին իր պատկերացումները, կառավարման արդյունավետության բարձրացման հնարավորությունները և այդ գործում

Խորհրդի դերակատարությունը: Նա կարևորեց Խորհրդի համատեղ աշխատանքը ԵՊՀ կառավարման մյուս երկու մարմինների՝ կառավարիչ-ռեկտորի և գիտական խորհրդի հետ: Նա առանցքային համարեց նաև ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի մշակումը առաջիկա տարիների համար:

Առաջին հարցը հնչեցրեց Խ. Աբաջյանը. նա հետաքրքրվեց, թե ինչպես է պատկերացնում հավակնորդը բուհի կառավարման մարմինների միջև գործառութային տարանջատումը: Կ. Խաչատրյանը պատասխանեց, որ, օրինակ, զարգացման ռազմավարական ծրագրի մշակման հարցում Խորհուրդը ռեկտորի և գիտական խորհրդի կողքին պետք է ունենա իր որոշակի տեսլականը:

Դ. Ափոյանը հարցրեց, թե ինչպես է վերաբերվում հավակնորդը բուհի անշարժ գույքի օտարման խնդրին: Կ. Խաչատրյանը պատասխանեց, որ դեմ է ֆունկցիոնալ ստորաբաժանումների, այդ թվում՝ ուսումնաարտադրական բազաների օտարմանը, և կարևորեց ռեսուրսների օպտիմալ կառավարման խնդիրը:

Ժ. Անդրեասյանը հետաքրքրվեց, թե ինչ գործնական առաջարկներով է հանդես եկել հավակնորդը ԵՊՀ կառավարման բարձրագույն մարմնում իր նախորդ փորձառության ժամանակահատվածում: Նա մեկ հարց ևս ուղղեց՝ ինչ աշխատանք է կատարել նա ֆակուլտետում կրթության կազմակերպման բարելավման ուղղությամբ: Հավակնորդը պատասխանեց, որ բարձրաձայնել է նախևառաջ ուսանողությանը հուզող հարցերը, քանի որ այդ ժամանակ Խորհրդում ներկայացված է եղել սովորողների համակազմից: Երկրորդ հարցին ի պատասխան՝ նա ներկայացրեց նաև իր գործունեությունը ամբիոնի վարիչի պաշտոնում: Այնուհետև Ժ. Անդրեասյանը հետաքրքրվեց, թե ինչպես է պատկերացնում հավակնորդը ուսումնական գործընթացի կազմակերպման բարելավումը, և ստացավ պարզաբանումներ նրա կողմից:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Մարտիրոսյանը հետաքրքրվեց, թե երբ է Կ. Խաչատրյանը որոշել առաջադրվել որպես Խորհրդի նախագահ և արդյոք այդ պաշտոնն ստանձնելուց հետո կունենա իրեն կաշկանդող հանգամանքներ: Հավակնորդը պատասխանեց, որ կաշկանդող որևէ գործոն չկա, իսկ առաջադրումն իր գործընկերների մտահղացումն է:

ՀՀ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարի տեղակալ Վ. Պողոսյանը խնդրեց հավակնորդին ներկայացնել իր հաջողությունները գիտական գործունեության և ուսումնական գործընթացը կազմակերպելու ոլորտներում: Կ. Խաչատրյանը ներկայացրեց հրատարակած աշխատանքների թիվը և գիտական դրամաշնորհներում ընդգրկվածության տվյալները:

Երկրորդ հավակնորդի ելույթից հետո Դ. Ափոյանը առաջարկեց Խորհրդի նախագահի ընտրությունը փակ, գաղտնի քվեարկությամբ կազմակերպել: Ա. Չուբարյանն առաջարկը դրեց քվեարկության, և 15 կողմ քվեներով որոշվեց քվեարկությունը փակ կազմակերպել: Առաջարկվեց հաշվիչ հանձնաժողովի կազմ՝ Խ. Աբաջյան, Գ. Հարությունյան և Մ. Գալստյան: Նիստը նախագահող Ա. Չուբարյանը քվեարկությունը կազմակերպելու համար հայտարարեց 15 րոպե ընդմիջում:

Քվեարկության արդյունքները ներկայացրեց հաշվիչ հանձնաժողովի նախագահ Խ. Աբաջյանը: Ըստ այդմ՝ Հ. Նավասարդյանը հավաքել է 14, իսկ Կ. Խաչատրյանը՝ 15 ձայն, ինչը, ըստ իրավակարգավորումների, բավարար չէ նախագահ ընտրվելու համար: Այս առնչությամբ Մ. Մալխասյանը հիշեցրեց, որ ընտրվելու համար անհրաժեշտ է առնվազն 17 քվե՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին, հետևաբար Խորհրդի նախագահ չի ընտրվել: Քվեարկության արդյունքները հաստատվեցին, և Ա. Չուբարյանը շարունակեց նախագահել նիստը:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ, 24-րդ հոդվածի 2-րդ, 25-րդ հոդվածի 6-րդ, 26-րդ հոդվածի 1-ին կետերով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 34-րդ կետով և նույն հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 և 3.13 կետերով, հիմք ընդունելով քվեարկության արդյունքները (Կառլեն Խաչատրյան՝ 15 քվե, Հայկազն Նավասարդյան՝ 14 քվե, անվավեր քվեներ՝ 0)՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ չի ընտրվել՝ բավարար թվով ձայներ չհավաքելու պատճառով:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի լիազորությունների կատարումը նիստի ավարտից հետո ժամանակավորապես հանձնարարել խորհրդի քարտուղարին՝ մինչև խորհրդի կողմից նախագահի ընտրության մասին որոշման կայացումը:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2021 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում: Գ. Գևորգյանն իր զեկույցի սկզբում նշեց, որ ԵՊՀ 2021 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը դեֆիցիտային է, ընդ որում՝ դեֆիցիտի լրացման աղբյուրը 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ նախորդ տարիների ընթացքում կուտակված դրամական միջոցների մնացորդն է:

Ուսման վարձավճարներից եկամուտները կազմում են 53.5 տոկոսը: ԵՊՀ-ում նվազագույն ուսման վարձի չափը կազմում է 500 հազ. դրամ բակալավրի 54 մասնագիտություններից 28-ի համար: Առավելագույնը 1 միլիոն դրամ է՝ ընդամենը մեկ մասնագիտության գծով, իսկ մնացած մասնագիտությունների ուսման վարձի չափերը տատանվում են 580-780 հազար դրամի սահմաններում: Ուսման վարձավճարներից նախատեսվող եկամուտները հաշվարկելիս հաշվի է առնվել 400 մլն դրամի չափով ուսման վարձի զեղչ: ԵՊՀ-ում 2020 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ սովորողների թիվը կազմում է 14.274, որից 1.131-ը՝ Իջևանի մասնաճյուղում: Վճարովի համակարգում սովորում են 11.700 սովորողներ, պետական ֆինանսավորմամբ՝ 2.574:

Պետական ֆինանսավորումն ավելացել է շուրջ 24 տոկոսով և համախառն եկամուտներում կազմում է 33.7 տոկոսը: Սակայն պետք է հաշվի առնել, որ պետական ֆինանսավորմամբ ծրագրերում ներառված են օտար երկրներում հայագիտական կենտրոնների պահպանման և հայոց լեզվի դասավանդման ծրագրեր, որոնց համար ստացված 52 մլն դրամ ֆինանսավորումը ԵՊՀ կողմից փոխանցվում է ՀՀ դեսպանատներին:

Մեծացել է պետական ֆինանսավորմամբ սովորող 1 ուսանողի գումարը, որը կազմում է 780 հազ. դրամ՝ նախկինում 640 հազ. դրամի փոխարեն, սակայն պետպատվերով սովորող ուսանողների թվաքանակի նվազումը այս առումով թույլ չի տալիս եկամուտների աճ գրանցել:

Գ. Գևորգյանը զեկուցեց նաև ծախսերի մասին: 2021 թ. փետրվարի 1-ից նախատեսված է պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձը բարձրացնել 10 տոկոսով: Մնացած անձնակազմի աշխատավարձերը նույն չափով բարձրացվելու են սեպտեմբերի 1-ից: Նախատեսված է նաև տարեվերջյան 13-րդ աշխատավարձը և, բացի այդ, սեպտեմբերին ամբողջ անձնակազմին ևս մեկ պարգևատրում է լինելու՝ հիմնական աշխատավարձի 50 տոկոսի չափով: Հարկերը ավելանալու են դրոշմանիշային վճարների և այլ հարկային պարտավորությունների մեծացման հաշվին: Կոմունալ ծախսերից ավելացել են գազի ծախսերը, քանի որ բարձրացել է սակագինը: Ապրանքանյութական ծախսերից սննդի ապրանքների ձեռքբերման հոդվածը փոխարինվել է հանրային սննդի մատուցման ծառայությունների հոդվածով և տեղափոխվել ծառայությունների ձեռքբերման հոդված: Սա կատարվել է Ծաղկաձորի ուսումնաարտադրական համալիրի շահագործման կարգավորման օրինակով:

Գ. Գևորգյանը ներկայացրեց նաև ուսումնաարտադրական բազաներում կատարված և նախատեսվող վերանորոգման և արդիականացման աշխատանքները:

Նա նաև հավելեց, որ ավելացվել է գեներատորի ձեռքբերման հոդվածը, որն անհրաժեշտ է սերվերային սենյակի անխափան էլեկտրամատակարարման համար: Նախատեսվում է նոր միկրոավտոբուսի ձեռքբերում՝ ի հաշիվ այս պահին ավտոպարկում առկա, սակայն չշահագործվող երկու այլ տրանսպորտային միջոցների օտարման:

Այնուհետև Խորհրդի անդամները հարցեր հնչեցրին: Դ. Ափոյանը հարցրեց՝ արդյոք կորոնավիրուսի համավարակի պատճառով բուհում ուսանողական հոսքի բեռնվածության նվազումը կարող էր հանգեցնել սանմաքրման ծախսերի տնտեսման: Գ. Գևորգյանը պատասխանեց, որ թեև նվազել են պայմանագրով նախատեսված ծառայությունները, սակայն ավելացել է, օրինակ, տարածքի ախտահանումը: Դ. Ափոյանը հարցրեց նաև ուսման վարձի մասնակի փոխհատուցման ծավալների կանոնակարգման մասին, և Գ. Գևորգյանը պատասխանեց, որ դրանց միայն մի մասն է օրենսդրական պահանջ, իսկ մնացածը բուհի ներքին կանոնակարգով է հստակեցված:

Կ. Խաչատրյանը հետաքրքրվեց բյուջեի դեֆիցիտը սպասարկող ֆինանսական ռեզերվի ծավալով: Գ. Գևորգյանը պատասխանեց, որ գլխավոր հաշվապահի երկարատև

հիվանդության պատճառով չի կարող ճշգրիտ ծավալն ասել, սակայն լավատեսորեն է տրամադրված եկամուտների ապահովման և դեֆիցիտը ծածկելու հարցում: Կ. Խաչատրյանը հարցրեց, թե ինչով է պայմանավորված լավատեսությունը: Գ. Գևորգյանը պատասխանեց, որ, օրինակ, մարզասրահի և հանրակացարանի սենյակների վարձակալությունից ստացվող եկամուտները կարող են մեծանալ տարվա ընթացքում կորոնավիրուսի սահմանափակումների վերացմանը համընթաց: Կ. Խաչատրյանը հարցրեց նաև աշխատավարձերի բարձրացման սոցիալական արդարության սկզբունքի պահպանման մասին ռեկտորի պաշտոնակատարի կարծիքը: Գ. Գևորգյանն ասաց, որ ուսումնաօժանդակ անձնակազմը և ամբիոնների քանակը, իր կարծիքով, ուռճացված են, հետևաբար ճիշտ կլիներ կրճատել: Կ. Խաչատրյանը նաև դիտարկում արեց, որ սանմաքրման համար կարելի էր քառակուսի մետրի հաշվարկով վերանայում անել պայմանագրում և վճարի չափը կրճատել, սակայն Գ. Գևորգյանը նշեց, որ այդտեղ աշխատանքի բնույթի փոփոխման շերտեր կան, որոնք բոլորը հնարավոր չէր կանխատեսել:

Գ. Հարությունյանը առաջարկեց առաջիկա նիստում լսել ռեկտորի պաշտոնակատարի 2020 թ. գործունեության հաշվետվությունը և բյուջեի կատարողականի մասին զեկույցը: Գ. Գևորգյանը նշեց, որ պատրաստ է հաջորդ նիստում ներկայացնել այդ հարցերը:

Ա. Հախումյանը հետաքրքրվեց մասնաշենքերի համալրման հնարավորություններով: Գ. Գևորգյանը պատասխանեց, որ ամեն տարի արվել են մասնաշենքերի նորոգման աշխատանքներ, սակայն ընդհանուր համալիրը բնականաբար հին է: Նա հավելեց, որ ֆակուլտետների տարածքը օպտիմալ չի կազմակերպվում, իսկ նոր մասնաշենքի կառուցման համար պետք է ձեռք բերել առնվազն հողակտոր, որի համար ներդրող է պետք:

Գ. Հարությունյանը կրկնեց իր նախորդ առաջարկը՝ պնդելով, որ հաջորդ նիստի օրակարգում դա ներառվի: Գ. Գևորգյանը հավելեց նաև ռեկտորի ընտրության հարցը առաջիկա նիստի օրակարգում ընդգրկելու անհրաժեշտությունը:

Վ. Ոսկանյանն առաջարկեց սահմանափակել օրակարգային հարցի քննարկումը:

Նախահաշիվը դրվեց քվեարկության. կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0[1]:

[1] Նախորդ հարցի քվեարկությունից հետո Խորհրդի անդամներից 7-ը լքել են նիստերի դահլիճը:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 7-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 7-րդ ենթակետով, լսելով ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանի զեկուցումը Երևանի պետական համալսարանի 2021 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2021 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին 2021 թ. ծախսերը կատարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2021 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվին համապատասխան:

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժին», ««Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագրություն» և ««Գիտական տեղեկագիր» հանդեսի խմբագրություն» կառուցվածքային ստորաբաժանումների միացում «Գիտական քաղաքականության վարչություն» կառուցվածքային ստորաբաժանմանը: Գ. Գևորգյանը ներկայացրեց կառուցվածքային փոփոխության նախագիծը՝ հիմնավորելով վարչական կազմակերպման օպտիմալացմամբ: Խ. Աբաջյանը հարցրեց, թե ինչու է նախագիծը հիմնավորվում 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրագործման անհրաժեշտությամբ, և արդյոք նախանշվում է նոր ծրագրի ընդունում, թե ոչ: Գ. Գևորգյանը պատասխանեց, որ ձևակերպումը մնացել է այդպես, քանի որ Խորհրդի նիստ չի գումարվել տևական ժամանակ:

Գ. Հարությունյանը հիշեցրեց, որ ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման համար զարգացման ռազմավարական ծրագրի առկայությունը պարտադիր է, իսկ Գ. Գևորգյանն արձագանքեց, որ հավատարմագրումն արվում է նախընթաց տարիներին նման փաստաթղթի առկայության հիմքով:

Հարցը դրվեց քվեարկության. կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1[2]:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ և 49-րդ կետի 2-րդ ենթակետերով, ինչպես նաև «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 12.03.2020 թ. № 11/4 որոշումը՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժին», ««Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագրություն» և ««Գիտական տեղեկագիր» հանդեսի խմբագրություն» կառուցվածքային ստորաբաժանումները միացնել «Գիտական քաղաքականության վարչություն» կառուցվածքային ստորաբաժանմանը:

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2021 թ. հաստիքացուցակի հաստատում: Գ. Գևորգյանը զեկուցեց, որ աշխատանքի վերաբաշխում, հաստիքների օպտիմալացում և գումարի վերաբաշխում կատարվել է տնտեսական գործունեությանն առնչվող ստորաբաժանումներում՝ հանգեցնելով աշխատավարձերի բարձրացման:

Խորհրդի անդամ, Գիտության կոմիտեի նախագահ Ս. Հայոցյանը հետաքրքրվեց՝ արդյոք արձանագրվել են հաստիքացուցակում իրենց կողմից ծրագրով ֆինանսավորվող այն նորաբաց լաբորատորիաները, որոնց ղեկավարները պարտադիր երիտասարդներ պիտի լինեին: Գ. Գևորգյանը պատասխանեց, որ հաստիքացուցակը շարժուն է տարվա ընթացքում, հետևաբար ըստ անհրաժեշտության դրանք կարող են ավելացվել:

Ա. Չուբարյանը հարցրեց, թե ինչպես դասախոսի մեկ դրույք աշխատավարձի չափը մեծացնել և դարձնել գրավիչ երիտասարդ կադրերի համար: Գ. Գևորգյանը պատասխանեց, որ ուսումնական ծրագրերի օպտիմալացումն անխուսափելի է: Կարևոր է նաև հիմնական հաստիքային աշխատող ձևակերպելու սկզբունքի վերանայումը, որպեսզի

[2] Քվեարկությանը ներկա էին Խորհրդի անդամներից 21-ը:

ցածր բեռնվածությամբ գործնական ոլորտի ներկայացուցիչներին, օրինակ, ինֆորմատիկայի պարագայում ներգրավեն դասավանդման գործընթացում:

Հ. Վարդումյանը հարցրեց՝ արդյոք նախատեսված է վարչական կազմի օպտիմալացում: Գ. Գևորգյանը պատասխանեց, որ կարելի է ուսումնական գործընթացը վերահսկող տեսուչների հաստիքները լուծարել և փոխարենը լսարաններում տեսախցիկներ տեղադրել, սակայն գիտական խորհրդում առաջարկը չի ընդունվել:

Կ. Խաչատրյանը հարցրեց, թե արդյոք գոհացնում է Գ. Գևորգյանին հաստիքացուցակի ներկա վիճակը: Նա պատասխանեց, որ իր խոսքից կարելի էր եզրակացնել հակառակը: Կ. Խաչատրյանը հարցրեց նաև դրույքաչափին ավելացվող հավելավճարի որոշման սկզբունքի մասին: Գ. Գևորգյանը պատասխանեց, որ համակարգը զգալիորեն պարզեցվել է այդ մասով Ա. Սիմոնյանի և իր ռեկտորության ժամանակ:

Դ. Ափոյանը հարցրեց, թե ինչ սկզբունքով է որոշվում հաստիքների բաշխումը՝ ըստ վարչությունների, բաժինների կամ կենտրոնների՝ օրինակ բերելով ֆինանսական վերլուծությունների վարչությունը, սակայն Գ. Գևորգյանը կանխեց հարցի ծավալումը՝ ասելով, որ առաջարկ է ներկայացնելու՝ լուծարելու այդ վարչությունը: Դ. Ափոյանը հարցրեց նաև միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստիքի գոյության նպատակահարմարության մասին՝ հաշվի առնելով նրան ենթարկվող ստորաբաժանումների փոքր թիվը և առաջարկելով միավորել դրանք վարչության ներքո: Գ. Գևորգյանն ուշադրություն հրավիրեց այդ ստորաբաժանումների գործառույթների տարբերությունների վրա: Խ. Աբաջյանը հետաքրքրվեց, թե ինչ սկզբունքով է որոշվում վարչության պետերի հաստիքների միջև տարբերությունը: Գ. Գևորգյանը գնումների պլանավորման վարչության պետի՝ իր կարծիքով արդյունավետ աշխատանքի օրինակով հիմնավորեց նրա լրավճարի բարձր լինելը:

Խորհրդի անդամ, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանը մտահոգություն հայտնեց, որ հարցերի քննարկումը դուրս է գալիս կանոնակարգված շրջանակներից, և նիստը անկանոն ընթացքով կարող է երկար շարունակվել:

Կ. Խաչատրյանը հանդես եկավ հաստիքացուցակի կազմման սկզբունքները հստակեցնելու նպատակով Խորհրդի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու առաջարկով, որի քվեարկությունը տեղափոխվեց ընթացիկ հարցերի մեջ: Ն. Խաչատրյանը ուշադրություն հրավիրեց պաշտոնի գործառույթների նկարագրության վրա:

Հաստիքացուցակը դրվեց քվեարկության. կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0[3]:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 6-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 6-րդ ենթակետով՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2021 թ. հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար աշխատակիցների առողջության ապահովագրման ծառայությունների մատուցման գնման պայմանագրի հաստատում: Գ. Գևորգյանը ներկայացրեց, որ օրակարգային այս և հաջորդող 2 հարցերի պայմանագրերը կնքվել են գնումների համար նախատեսված իրավական բոլոր ընթացակարգերի պահպանմամբ: Դ. Ափոյանը հարց բարձրացրեց, թե ինչու են պայմանագրերը կնքվել 3 տարով: Գ. Գևորգյանը խոսքը փոխանցեց պրոռեկտոր Ա. Մալխասյանին, ով ասաց, որ դա պայմանով է արվել, և յուրաքանչյուր տարի պայմանագիրը կարող է վերանայվել՝ հայտարարելով նոր մրցույթ, սակայն 3 տարվա սահմանումը թույլ է տալիս նույն պայմանագիրը շարունակել լրացուցիչ համաձայնագրի կնքման պայմանով: Կ. Խաչատրյանը հարցրեց՝ հնարավոր է նոր մրցույթի հայտարարումը սույն պայմանագրի առկայության պայմաններում: Ա. Մալխասյանը պատասխանեց, որ նոր մրցույթի հայտարարումը օրենքով թույլատրվում է: Խորհրդի անդամ, «Հայաստան համահայկական հիմնադրամ»-ի գործադիր տնօրեն Հ. Արշամյանը կարծիք հայտնեց, որ վճարվող գումարը տրվող փաթեթի համար մեծ է համարում: Ա. Մալխասյանը բացատրեց գնի ձևավորման սկզբունքները և բաղադրիչները:

[3] Քվեարկությանը ներկա էին Խորհրդի անդամներից 21-ը:

Պայմանագիրը դրվեց քվեարկության. կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2: Ներկա անդամներից 2-ը չմասնակցեցին քվեարկությանը[4]:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 17-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 17-րդ ենթակետով՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար աշխատակիցների առողջության ապահովագրման ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը (№ «ԵՊՀ-ԲՄԾՁԲ-20/158»)՝ համաձայն հավելվածի:

7. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար անվտանգության ապահովման ծառայության մատուցման պետական գնման պայմանագրի հաստատում: Նիստը նախագահող Ա. Չուբարյանը, հաշվի առնելով նախագծի քննարկումը օրակարգային 6-րդ հարցի հետ միասին, պայմանագրի հաստատումը դրեց քվեարկության. կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 5[5]:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 17-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 17-րդ ենթակետով՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար անվտանգության ապահովման ծառայության մատուցման գնման պայմանագիրը (№ «ԵՊՀ-ԲՄԾՁԲ-20/156»)՝ համաձայն հավելվածի:

8. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար սանիտարական մաքրության ծառայության մատուցման գնման պայմանագրի հաստատում: Նիստը նախագահող Ա. Չուբարյանը, հաշվի առնելով նախագծի քննարկումը

[4] Քվեարկությանը ներկա էին Խորհրդի անդամներից 20-ը:
[5] Քվեարկությանը ներկա էին Խորհրդի անդամներից 20-ը:

օրակարգային 6-րդ և 7-րդ հարցերի հետ միասին, պայմանագրի հաստատումը դրեց քվեարկության. կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4[6]:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 17-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 17-րդ ենթակետով՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար սանիտարական մաքրության ծառայության մատուցման գնման պայմանագիրը (№ «ԵՊՀ-ԲՄԾՁԲ-20/157»)՝ համաձայն հավելվածի:

9. Ընթացիկ հարցեր: Կ. Խաչատրյանը կրկնեց հաստիքացուցակի հարցի շրջանակում իր առաջարկը՝ ստեղծելու հաստիքացուցակի կազմման սկզբունքներն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողով՝ 5 անդամներով: Հանձնաժողովի կազմում առաջարկվեցին 5 անդամների թեկնածություններ՝ Գ. Մամիկոնյան, Դ. Ափոյան, Խ. Աբաջյան, Կ. Խաչատրյան, Մ. Մալխասյան:

Առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0[7]:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 6-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.2 կետով, 2.4 կետի 6-րդ ենթակետով և 8.1 կետով՝

1. Ստեղծել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2021 թ. հաստիքացուցակի կազմման սկզբունքներն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողով՝ հետևյալ կազմով. Գոհար Մամիկոնյան, Դավիթ Ափոյան, Խաչիկ Աբաջյան, Կառլեն Խաչատրյան, Միքայել Մալխասյան:

---

[6] Քվեարկությանը ներկա էին Խորհրդի անդամներից 20-ը:
[7] Քվեարկությանը ներկա էին Խորհրդի անդամներից 18-ը:

2. Հանձնարարել հանձնաժողովին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քննարկմանը ներկայացնելու ուսումնասիրության արդյունքները՝ համապատասխան առաջարկներով:

Այնուհետև Ա. Չուբարյանը նիստը հայտարարեց փակված:

Խորհրդի նիստը նախագահող՝ **Ա. Չուբարյան**

Քարտուղար՝ **Մ. Մալխասյան**